

ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՖԱՇԻՉՄԻ ԴԵՄ ՀԱԹԱՆԱԿԻ ՕՐ

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայիսի 9-ին լրացավ երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 77-րդ տարին:

Ընթերցողին հիշեցնենք, որ Թբիլիսիում, Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի օրը ամեն տարի նշվում է Վալենի զբոսայգում: Այս տարի այգու վերականգնման աշխատանքների պատճառով, Թբիլիսիի քաղաքապետարանը, վերանորոգելի հավաքը կազմակերպեց Կիլիմիտի անվան Վերանորոգման մշակույթի եւ հանգստի զբոսայգում:

Այդ օրը զբոսայգի այցելեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլին, Վրաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչներ: Նրանք ծաղիկներ խոնարհեցին այգում տեղակայված հերոսների հուշակոթողին,



Խորհրդային Միության հերոս Մելիտոն Քանթա (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ԵՎՐԱԽՆՏԵԳՐՈՒՄ

## ԻՐԱԿԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՆՀԱՄԲԵՐ ՄՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ»

### ՀԱՆՁՆՎԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

Մայիսի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Վրաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Կառլ Հարցելին հանձնեց Եվրահանձնաժողովի հարցաթերթիկի երկրորդ մասը, որը երկիրը լրացրել է ժամկետից շուտ:

- Ուրախ ենք ներկայացնել հարցաշարի պատասխանները: Մենք ավարտել ենք լրացումը, ընդհանուր առմամբ տպագրվել է 7 գիրք, եւ ես սիրով կհանձնեմ ձեզ: Մենք անհամբեր սպասում ենք Եվրահանձնաժողովի եւ նրա անդամ երկրների որոշմանը,- ասաց Վրաստանի վարչապետը հարցաթերթիկի հանձնման ժամանակ եւ հավելեց, որ Վրաստանի եվրոպական ընտրությունը այլընտրանքային որոշում է, ոչ միայն կառավարության, այլ նաեւ վրաց ժողովրդի ընտրությունն է:

Կառլ Հարցելը շնորհակալություն հայտնեց Վրաստանի վարչապետին եւ նշեց, որ հարցաթերթիկը մեծապես կօգնի Եվրահանձնաժողովին իր



գնահատման հարցում:

- Պարոն վարչապետ, ես շնորհակալ եմ այստեղ լինելու եւ ստանալու ձեր եւ շատ այլ մարդկանց քրտնաջան աշխատանքի արդյունքները, որոնք արվել են հարցաշարի երկրորդ եւ վերջնական գործընթացում: Դա կօգնի Եվրահանձնաժողովին որոշել արդյունքը,- ասաց Կառլ Հարցելը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 182

## ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐՎԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ



Ղազարոս Աղայան (1840-1911 թթ.) գրողի, մանկագրի, մանկավարժի, գրական-հասարակական գործչի, մարդու եւ քաղաքացու թերեւս ժանրակշիռ վաստակը մեր մշակույթի տարեգրության մեջ արժեւորելու եւ նրա ուսանելի կենսագրությունը սերունդներին ներկայացնելու միտումով է, որ գրողի ծննդավայր Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում ավանդաբար՝ շուրջ 22 տարի նշվում է Աղայանական օրը:

Տոնակատարությունն այս տարի անցկացվեց մայիսի 7-ին: Միջոցառմանը մասնակցելու նպատակով Աղայանի տուն-թանգարանի բակում բուլնիսիսկիցների հետ հավաքվել էին նաեւ հյուրեր Բոլնիսիից, Թբիլիսիից, Մառնեուլիից:

Մեծ գրողի կիսանդրում ծաղիկներ խոնարհելուց եւ տուն-թանգարանում շրջայց կատարելուց հետո, սկսվեց տոնական հանդիսությունը: Այն ողջույնի

խոսքով բացեց Բոլնիս-Խաչենի գյուղապետ Արմեն Հարությունյանը, այնուհետեւ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության քբիլիսյան բաժանմունքի ղեկավար Կարինե Մանուկյանը արժեւորեց Աղայանի դերը հայ մշակույթի տարեգրության մեջ, մասնավորապես՝ այն մեծ ավանդը, որ տաղանդաշատ գրողն ունեցել է գրականության, մանկագրության, մանկավարժության, մայրենի լեզվի պահպանության, թունամյանական «Վեր-

նատան» կայացման ու հայ-վրաց բարեկամության կամուրջը բանուկ պահելու ուղղությամբ: Նա երախտագիտություն հայտնեց Բոլնիսիի մունիցիպալիտետին վերջին 8 տարիների ընթացքում տոնի հոգաժողովունը ստանձնելու համար, ինչպես նաեւ գյուղապետարանին, որ ջանք չէր խնայել՝ տոնակատարության իր մասնաբաժինը պատշաճ կազմակերպելու գործում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՐԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐ

Հայ ժողովուրդը մայիսի 9-ին առանձնահատուկ խոնարհումով նշեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 77-րդ տարին, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծման տարեդարձը:

Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ օրենսդիր ու գործադիր մարմնի անդամների ու-



ղեկցությամբ, այցելեց «Հաղ-Սիմոնյանի եւ օրենսդիր ու գործադիր մարմնի անդամների ու-

ղեկցությամբ, այցելեց «Հաղ-Սիմոնյանի» զբոսայգի:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԸ

Մայիսի 12-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշում է Սուրբ Անդրեաս Առաջինի հիշատակության օրը: Սուրբ Անդրեասը առաջինն էր, ով առաջին դարում Վրաստանում քրիստոնեություն էր քարոզում: Այդ օրը տոնական արարողություններ են անցկացվում Վրաստանի բոլոր ուղղափառ եկեղեցիներում:



Այդ օրը Թբիլիսիի Մախաթի լեռան վրա գտնվող Իվերիայի Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվեց Վրաստանում Քրիստոսի եկեղեցու հիմնադրման տարելիցին նվիրված տոնական պատարագ:

Տոնի կապակցությամբ, իր շնորհավորական ուղերձում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին ընդգծում է այն իրողությունը, որ հենց Անդրեասը որպես Քրիստոսի առաջին առաքյալ, վրաց հողում դրեց քրիստոնեության տարածման հիմքը:

- Ավելի քան երկու հազարամյակ Փրկչի խոսքն ու ավետարանի արժեքները սահմանել են մեր

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### ՖԻՆԱՆՍԵՐ

## ԿՈՐԱ ԳՎԵՆԵՏԱԶԵ. «ԳՆԱՃԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՍՏԱՑՎԻ»

Վրաստանի Ազգային բանկի նախագահ Կորա Գվենետաձեն, անդրադառնալով գնաճի զսպմանն ուղղված միջոցառումներին, նշեց, որ գնաճին նպաստել է երկու գործոն:



Եվ առաջինը դրանցից համավարակն էր, որին հաջորդեց ռուսական ներխուժումը Ուկրաինա: Սրանք այն գործոններն էին, որոնք հանգեցրին գնաճի բարձրացմանը ոչ միայն Վրաստանում, այլեւ ամենուր:

- Սակայն մեր հայտարարած քաղաքականության արդյունքում ձեռնարկելու ենք բոլոր միջոցները, որպեսզի գնաճը չգերազանցի սպասելիքները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ եւ կարելու է դրամավարկային քաղաքականության պահպանումը խիստ մակարդակի վրա: Միաժամանակ, մենք հայտարարել ենք, որ դրամավարկային քաղաքականությունը խստացվելու է այնքան ժամանակ, քանի դեռ չեն նշմարվել գնաճային սպասումների զսպման նշաններ,- ասաց Կորա Գվենետաձեն:



ՄԱՅԻՍԻ 9-Ը՝ ՖԱՇԻՉՄԻ ԴԵՄ ՀԱԹԱՆԱԿԻ ՕՐ

ՀԱՐՉԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏՈՒՄ ԶՈՂՎԱԾ ՇԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇՆԱՍԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րիայի կիսանդրում:

- Ինչպես գիտեք, վրացիները մեծ ներդրում են վաստակ ունեն այս պատերազմի հաղթանակում: Իհարկե, ես մեկ անգամ ուզում եմ հարգանքի տուրք մատուցել մեր հերոսներին, ովքեր զոհաբերեցին իրենց հանուն աշխարհի ավելի լավ ապագայի: Ուստի պատերազմում հաղթանակի մեծ վաստակը նաեւ մերն է՝ վրացիներին: Ուզում եմ շնորհավորել Ձեզ՝ մայիսի 9-ի կապակցությամբ եւ՝ բոլորիդ մաղթել հաղթանակ եւ խաղաղություն,- ասաց վարչապետը դի-

մելով այգում հավաքված վետերաններին՝ իր խոսքումը բերելով նրանց եւ Երկրորդ համաշխարհային պատերազմում Վրաստանից մեկնած ու զոհված մոտ 300 հազար զինվորների առջեւ:

Նշենք, որ, Վետերանների գործերի պետական ծառայության տվյալներով, Վրաստանում, ներկա դրությամբ, ապրում է Երկրորդ համաշխարհային պատերազմի 173 մասնակից, որոնցից ամենատարեցը 103 տարեկան է:

Վրաստանի կառավարության որոշմամբ, ֆաշիզմի դեմ Հաղթանակի օրը, Երկրորդ համաշխարհային պատերազ-

մի վետերանները ստացել են միանվագ 1000 լարի, իսկ պատերազմում զոհվածների ընտանիքներին փոխանցվել է 500 լարի:

Ավելացնենք նաեւ, որ, մինչ կառավարության որոշումը, Թբիլիսիի քաղաքապետարանի առողջապահության եւ սոցիալական ծառայությունների վարչությունը, Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերաններին փոխանցել է 600 լարի, իսկ պատերազմում զոհվածների ընտանիքներին՝ 300 լարի, որը, համապատասխանաբար, բարձրացվել է մինչեւ 400 եւ 200 լարի եւ պատե-

րագմի վետերանների համար 1000 լարի է կազմել:

«Մայիսի 9-ի Հաղթանակի կապակցությամբ՝ Թբիլիսիի քաղաքապետարանը նյութական օգնություն է ցուցաբերել Երկրորդ համաշխարհային պատերազմի 84 վետերանների եւ այդ պատերազմում զոհվածների ընտանիքների 46 անդամների:

Գումարի փոխանցումը կատարվել է շահառուների անձնական բանկային հաշվին՝ Վետերանների գործերի պետական ծառայության տրամադրած տվյալների բազայի հիման վրա»,- ասված է հաղորդագրության մեջ:



ՖՐԱՆՍԻԱ ԵՄԱՆՈՒԵԼ ՄԱԿՐՈՆԸ ՊԱՇՏՈՆԱԴԵՍ ՍՏԱՆԶՆԵՑ ՆԱԽԱԳԱԴԻ ՊԱՇՏՈՆԸ

Մայիսի 7-ին, Ֆրանսիայի նախագահի պաշտոնում վերընտրված Էմանուել Մակրոնը, հինգ տարով պաշտոնապես ստանձնել է երկրի ղեկավարի պաշտոնը: Երդմանակալության արարողությունը տեղի ունեցավ Ելիսեյան պալատում:

Արարողության ընթացքում Սահմանադրական խորհրդի նախագահ Լորան Ֆաբիուսը հնչեցրել է նախագահական ընտրությունների պաշտոնական արդյունքները եւ՝ դիմելով Մակրոնին, հայտարարել. «Հայտարարում եմ Ձեզ Հանրապետության ընտրված նախագահ»:

Դրանից հետո Մակրոնը հայտարարվեց Պատվո լեգեոնի շքանշանի Մեծ մագիստրոս:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՅՐԱԺՎՐԿԵՆ ՌՈՒՄԱԿԱՆ ՆԱՎԹԻՑ

Եվրամիությունը նախատեսում է՝ մինչեւ տարեվերջ հրաժարվել ռուսական նավթից: Եվրահանձնաժողովն աշխատում է համապատասխան ծրագրի վրա:

Ենթադրվում է, որ Եվրամիությունը մտադիր է որոշակի զիջումների գնալ Հունգարիայի եւ Սլովակիայի հանդեպ, որոնք մեծապես կախված են ռուսական նավթից:

ԱՄՆ

ՋՈՒՐԱԳԵՆԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ «ԼԵՆԻՆ ԼԻԶԻ» ԱԿՏԸ

Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենը ստորագրեց Ուկրաինայում ժողովրդավարության պաշտպանության, այսպես կոչված, «Լենոլ լիզի» ակտը:

«Լենոլ լիզի» ծրագիրը կհեշտացնի Ուկրաինային սպառազինության մատակարարման գործընթացը:

Նշենք, որ «Լենոլ լիզի» ծրագիրը վերջին անգամ գործարկվել է Միացյալ Նահանգների կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՄԱՆՈՒՄԵՆՅՈՒ ՎԵՏԵՐԱՆՆԵՐ ՄԻՍԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՀԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Մայիսի 9-ին, Սամցխե-Ջավախեթի երկրամասի պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Ախալցխեի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Դավիթ Ջոմիժեն, փոքր քաղաքապետ Ռուբեն Կարապետյանը, երկրամասային եւ տեղական ինքնակառավարման ներկայացուցիչների հետ միասին, ծաղկեպսակներ խոնարհեցին Երկրորդ Համաշխարհային պատերազմի զոհերի հուշակոթողին:



Երկրամասային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները հանդիպեցին Ախալցխեի մունիցիպալիտետում ապրող պատերազմի երեք վետերանների՝ Միսակ Ավետիսյանին, Վարդան Ղուկասյանին եւ Սահակ Միքայելյանին: Վետերանների ընտանիքներում կայացած հանդիպմանը, Վրաստանի վարչապետի անձնական շնորհավորական ուղերձի հետ միասին, նրանց

հանձնվեցին դրամապարգեւներ եւ նվերներ: Վետերաններին տրվեց միանգամյա դրամական պարգև: Բոլոր մունիցիպալիտետներում, մունիցիպալային բյուջեից պատերազմի մասնակիցներին տրվեց 700 լարիի պարգև, իսկ պետության կողմից Երկրորդ աշխարհամարտի

մասնակիցներին փոխանցվեց 1000, պատերազմում զոհվածների ընտանիքներին՝ 500-ական լարի:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ՎՐԱՍԱՆԸ ՆՇԵՑ ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՄԻ ՀԻՇՆԱՍԱԿԻ ՕՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ինքնությունը, մեր պատմությունը, մեր մշակույթը, մեր պետականությունը, մեր ապրելակերպը:

Սրանք այն արժեքներն են, որոնք պատմականորեն ձեւա-

վորել են ժողովրդավարության, մարդու ազատության, խաղաղության եւ բարգավաճման քաղաքական իդեալները եւ՝ կազմել ժամանակակից արեւմտյան քաղաքակրթության հիմքը:

Ի նշան այս արժեքների

անդավաճան հավատարմության՝ 2018 թվականին մենք կիսեցինք Վեհափառ Հայրապետի՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի նախաձեռնությունը՝ հռչակելու Աստվածածնի հիշատակի օր, Վրաց առաքե-

լական եկեղեցու հիմնադիր Սուրբ Անդրեաս Առաքյալի ազգային տոն,- ասել է Իրակլի Դարիբաշվիլին:

Նշենք, որ Վրաստանում այս օրն ունի պետական տոնի կարգավիճակ եւ երկրում ոչ աշխատանքային օր է:

ՌՈՒՄ - ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԶԻԼ ԻՍԿՐԵԱՇՎԻԼԻ. «ՌՈՒՄԱՍՏԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅՈՒՐԱՔԱՆՅՈՒՐ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԽՍՈՒՄ Է 800-900 ՄԻԼԻՈՆ ԴՈՒԱՐ»



Տնտեսագետ Արչիլ Իսկրեաշվիլու գնահատմամբ՝ Ռուսաստանը Ուկրաինայի դեմ պատերազմում ամեն օր ծախսում է 800-900 միլիոն դոլար: Փորձագետի հավաստմամբ՝ Արեւմուտքի կողմից ձեռնարկված պատժամիջոցների արդյունավետությունը կարճաժամկետ էր, ապրիլին Ռուսաստանում վավերացվեց 20 տոկոսի արժեզրկում, իսկ տարադրամի պաշարները նվազեցին 10 տոկոսով: Ընդ որում, փորձագետը վստահեցնում է, որ պատժամիջոցներ սահմանած երկրները ստիպված են փոխելու իրենց շուկայի կառուցվածքը, որպեսզի կարողանան փոքրիշատե կարգավորել գների հնարավոր աճը:

- Փաստորեն, Ռուսաստանը Ուկրաինայի դեմ պատերազմի համար միջոցները հատկացնում է երկրի բարեկեցության հիմնադրամից: Տվյալ պարագայում նշանակալից է Ռուսաստանի էներգառեսուրսների նկատմամբ սահմանած պատժամիջոցները: Բնականաբար, դա կհանգեցնի պատժամիջոցներ սահմանած երկրներում շուկայի կառուցվածքի փոփոխման, ինչը, ընդ որում, նկատելի է նաեւ մեզ մոտ՝ Վրաստանում: Եվրոպական մի շարք երկրներ, մասնավորապես՝ Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան գոտիացնում են գների կտրուկ աճից, թեւեւ հարկ է մտածել նաեւ սպառողական ապրանքների պակասորդի ուղղությամբ: Գիշտ է, սպառողական ապրանքների հարցով այդ երկրների պահանջարկը Գերմանիան եւ

Ավստրիան կարող են լրիվությամբ բավարարել, թեւեւ այդ ապրանքները կհանձնվեն շատ ավելի բարձր գներով,- հայտարարեց Արչիլ Իսկրեաշվիլին:

ՌԻԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՃՈՒՄ ԵՆ

Ուկրաինայի Գլխավոր շտաբի տվյալներով՝ փետրվարի 24-ից մայիսի 8-ն ընկած ժամանակահատվածում, Ռուսաստանը, Ուկրաինայի հետ պատերազմի ժամանակ, կորցրել է 25500 զինծառայող, ոչնչացվել է 1130 տանկ, 2741 զրահամեքենա, 509 հրետանային համակարգ եւ 179 հրթիռային համակարգ, 86 հակաօդային պաշտպանության համակարգ, 199 ինքնաթիռ եւ 156 ուղղաթիռ, 1961 մեքենա:

Ուկրաինայի գլխավոր շտաբի տվյալներով՝ ոչնչացվել է նաեւ 12 նավ, 360 օպերատիվ-տեխնիկական անօդաչու թռչող սարք, 39 հատուկ տեխնիկա եւ 92 թեւավոր հրթիռ:

ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ԱՌԱՆՑ ՎԵՐՋՆԱԳՐԵՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Դմիտրի Կուլեբան հայտարարել է, որ Կիեւը պատրաստ է Ռուսաստանի հետ բանակցությունների, սակայն չի ընդունի ռուսական կողմի վերջնագրերը:

Միաժամանակ Կուլեբան պնդել է, որ Ռուսաստանի Դաշնությունը չի ցանկանում նստել բանակցությունների սեղանի շուրջ, այլ մտադիր է շարունակել ռազմական գործողությունները:

- Իրական խնդիրն այն է, որ Ռուսաստանը պատրաստ չէ իրական եւ բովանդակալից բանակցություններ վարել,- ասաց Ուկրաինայի ԱԳ նախարարը:

ՌԻԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՌՈՒՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԸ ԲՈՆԱԳԱՆՅՎՈՒՄ ԵՆ

Ուկրաինայի կառավարությունը երկրի տարածքում գտնվող բոլոր ռուսաստանյան ակտիվները կփոխանցի «Ուկրաինայի ներդրումների ազգային հիմնադրամ» պետական ձեռնարկությանը: Նախարարների կաբինետի այդ որոշման մասին հայտնեց Ուկրաինայի վարչապետ Դենիս Շմիգալը:

Նրա խոսքով՝ բոլոր ռուսաստանյան ակտիվները կանցնեն «Ներդրումների ազգային հիմնադրամ» պետական ձեռնարկությանը: Մենք կվերցնենք այն ամենը, ինչ Ռուսաստանն ունի մեր երկրում, եւ այդ միջոցները կուղղենք մեր բանակի ուժեղացմանը, մարդկանց աջակցությանը եւ մեր երկրի վերականգնմանը,- հայտարարեց վարչապետը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՈՉ ԲԱՐԵՎԱՄԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՄ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, ոչ բարեկամական երկրների եւ միջազգային կազմակերպությունների գործողությունների կապակցությամբ, ստորագրեց պատժամիջոցներ սահմանելու հրամանագիր:

Հրամանագրով, պատժամիջոցների ցուցակում հայտնված երկրների եւ կազմակերպությունների հետ, արգելվում է որեւէ գործարքն ու օտարերկրյա ֆինանսական ու իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների կատարումը: Բացի այդ, արգելվում է Ռուսաստանից ապրանքների ու հումքի դուրսբերումը:

Նախագահի հանձնարարությամբ՝ կառավարությունը տասը օրում ներկայացնելու է այդ երկրների ու կազմակերպությունների ցանկը:



Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇԿԻԼԻ. «ՄԵՆՔ ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑՈՎ ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ»

ՀԱՆՁՆՎԵՑ ԵՎՐԱՄԻՆՏԵԳՐԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Ինչպես հայտնի է, Եվրահանձնաժողովի հարցաշարի երկրորդ ոլորտային մասը ներառում է 33 գլուխ, մինչև 2300 հարց բոլոր ոլորտային ուղղություններով, որի տրամադրման

ժամկետը Եվրամիությունը սահմանել էր մայիսի 13-ին: Հարցաթերթիկի ծավալն արդյունավետ է սեղմ ժամկետներում լրացնելու նպատակով՝ ներգրավվել են բոլոր համապատասխան պետական գերատեսչությունները, եւ գործըն-

թացը վերահսկվել է անձամբ կառավարության ղեկավարի կողմից: Հարցաթերթիկի առաջին մասը Վրաստանի կառավարության ղեկավարը մայիսի 2-ին հանձնել է Եվրամիության ղեկավարին: Հարցաթերթիկի

երկրորդ մասը ներկայացնելուց հետո՝ Եվրահանձնաժողովը կսկսի պատրաստել սեփական գնահատման զեկույցը, որը կներկայացվի Եվրամիության խորհրդին, իսկ համապատասխան որոշումը սպասվում է հունիսի վերջին:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՌԵՎԱՋ ԶԱՎԵԼԻՋԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՏԱԿԱԶՄԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու կարգադրությամբ, Ռեւազ Զավելիձեն նշանակվել է երկրի կառավարության աշխատակազմի ղեկավար:

46-ամյա Ռեւազ Զավելիձեն մինչ այդ զբաղեցնում էր Վրաստանի կառավարության վարչակազմի պետի տեղակալի եւ կառավարության խորհրդարանական քարտուղարի պաշտոնները: Նա ունի ինչպես հանրային, այնպես էլ՝ մասնավոր հատվածներում աշխատանքային փորձ: Ժամանակին եղել է Վրաստանի սպորտի

եւ երիտասարդության հարցերի փոխնախարար, տարբեր պաշտոններ է զբաղեցրել նաեւ միջազգային մի շարք ընկերություններում: Ռեւազ Զավելիձեն հանդիսանում է Տեխասի համալսարանի իրավունքի մագիստրոս: Հիշեցնենք, որ Ռեւազ Զավելիձեն

Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնում փոխարինեց Իլիա Դարչիաշվիլուն, որը նշանակվել է Վրաստանի արտաքին գործերի նախարար:



ՂԻՄԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԲԻԼԻՍԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Ե ՑԻՒՆՎԱԼԻՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ, ԱՅՄՊԵՍ ԿՈՉՎԱԾ, «ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ԱՆՆ ՎԱՐՈՒՄ, ԱՅՄՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱԶ

Մայիսի 8-ին, բռնազավթված Ցիսնվալիի տարածաշրջանում, անցկացվեց, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի Համրապետության «Նախագահական ընտրությունների» երկրորդ փուլը:

Ընտրությունների արդյունքներով գործող նախագահ Անատոլի Բիբիլովը հավաքել է ձայների 37 տոկոս, իսկ նախագահության թեկնածու Ալան Գազլուելը՝ 59,22 տոկոս: Ընտրողների մասնակցությունը կազմել է 40,4 տոկոս:

Ընտրությունները կայացված ընտրությունների արդյունքները: Պաշտոնական թեկնածուների կողմից չվերահսկվող Ցիսնվալիի շրջանում կայացած «Նախագահական ընտրությունները»:

վական ազդեցություն չի ունենա, երբ, վրացիների էթնիկ գոտիների հետեւանքով, Աբխազիայից եւ Ցիսնվալիից վտարված հարյուր հազարավոր փախստականներ եւ տեղահանված անձինք դեռ գրկված են հայրենիք վերադառնալու իրավունքից»,- ասված է Վրաստանի արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ) տարածած հաղորդագրության մեջ:

ԱԳՆ-ը նաեւ Ռուսաստանի Դաշնությանը կոչ է անում հարգել Վրաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը եւ կատարել իր միջազգային պարտավորությունները, ներառյալ՝ 2008 թվականի օգոստոսի 12-ի իրադարձության մասին ԵՄ միջնորդությամբ ձեռքբերված համաձայնագրի դրույթները:

Նշենք, որ միջազգային հանրությունը չի ընդունում Վրաստանից անջատված Ցիսնվալիի տարածաշրջանում կայացված ընտրությունների արդյունքները:

«Ռուսական բռնազավթման ներքո ոչ մի ընտրություն իրավապես չի կատարվում»:

«Արտաքին գործերի նախարարությունը կոչ է անում միջազգային հանրությանը՝ պատշաճ գնահատել եւ արդյունավետ արձագանքել Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ հետագա անօրինական գործողություններին»:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ

ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մայիսի 11-ին Թբիլիսիում, ինքնակառավարման մարմինների ղեկավարների, Վրաստանի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների, Վրաստանի ժողովրդական պաշտպանի, ինչպես նաեւ միջազգային եւ տեղական ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, անցկացվեց Վրաստանի տեղական ինքնակառավարման ազգային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Գեոդերային հավասարության քաղաքականությունը տեղական մակարդակում՝ հիմնական մարտահրավերներ եւ գործնական քայլեր» լայնածավալ համաժողով: Մասնակիցների թվում էր նաեւ Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը:



Համաժողովի շրջանակներում անցկացվեց նաեւ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գեոդերային հավասարության եւ կանանց հզորացմանն աջակցող, համատեղ հայտարարության ստորագրման արարողություն:

ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐ ՎՈՒՉԵՐՆԵՐՈՎ. ԳՐԱՆՑՎԵԼ Է ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ 9, ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ 2 ԽԱՆՈՒԹ

Մայիսի 13-ից Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների բնակիչները վառուչներով կարող են գնել գյուղմթերքներ: Վրաստանի գյուղատնտեսության նախարարության տվյալներով՝ խանութների ցանկն աստիճանաբար ընդլայնվում է: Նինոծմինդա քաղաքում գրանցված է երկու խանութ, իսկ Ախալքալաքում՝ 9 խա-

նութ: Այդ խանութներում բնակիչները կարող են ձեռք բերել պարարտանյութ, քիմիական եւ գյուղատնտեսական այլ ապրանքներ:

Նշենք, որ Վրաստանի կառավարությունը, ինչպես նախորդ տարի, գյուղատնտեսական կտրոններ կտրամադրի Վրաստանի բնակիչներին: Կտրոններ կարող են ստանալ ռեգիստրում գրանցված գյուղատնտեսական նշանակության հողատարածք ունեցող իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:

Ծրագրին կարող են մասնակցել, 0,25 հա-ից պակաս եւ 1,25 հա-ից ոչ ավելի գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող, բոլոր սեփականատերերն ու համասեփականատերերը, բացառությամբ արտավայրերի: Ֆերմերները մեկ հեկտարի համար կստանան 300 լարի (միավորների տեսքով), իսկ մինչև 0,25 հա-1,25 հա հող ունեցողները, համամասնական հաշվարկով, կստանան համապատասխան միավորներ:

ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ՀՈՒԼԱՎԵՐԻ-ՀԱՅՈՒՄՅԱՆ-ՍԻՈՆԻ-ԾԵՐԱՔՎԻ ԾԱՆԱԴԱՐՅԻ ՀԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մառնեուլիի մունիցիպալիտետի Շուլավերի-Շահումյան-Սիոնի-Ծերաքվի ճանապարհի 6 կմ հատվածի հիմնադրաման աշխատանքները շարունակվում են:



Նախագիծը նախատեսում է ճանապարհի տեխնիկական պարամետրերի բարելավում, մասնավորապես՝ ճանապարհի վերականգնում, փոսերի եւ առկա արհեստական կառույցների նորոգում եւ նորերի տեղադրում: Տեղական ճանապարհների, համայնքային բակերի մուտքերի եւ կանգառների հետ կապերի կազմակերպում, ինչպես նաեւ երթևեկելի հատվածի գծանշում եւ ճանապարհային նշանների տեղադրում:

Վերականգնման ծրագիրը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որի արժեքը կազմում է 3 մլն 143 հազար 970 լարի:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ԱՆՈՒԿՅԱՆԸ



ՂԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 182

# ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐԿԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Լռության թուրքով հարգվեց ՎՅԳ «Վերնատուն» միության բարեհիշատակ նախագահ Ժորա Մնխչյանի հիշատակը, ում ներդրումը մեծ է ավանդույթի հիմնադրման ու պահպանման գործում: Այնուհետև խոսքը տրամադրվեց Բոլնիսի քաղաքապետ Դավիթ Շերազադի շնորհիվ:

- Այսօր մենք նշում ենք հայ անվանի գրող Ղազարոս Աղայանի ծննդյան 182-ամյակը: Հպարտ ենք, որ Բոլնիսի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում ծնվել է մի մարդ, ով մեծ ներդրում է ունեցել հայ գրականության զարգացման մեջ: Ղազարոս Աղայանը հայ-վրաց բարեկամության յուրօրինակ խորհրդանիշ է, եւ նրա ստեղծագործությունը արժեքավոր է ոչ միայն հայ ազգի, այլ նաեւ մեզ համար: Բոլնիս-Խաչեն գյուղի յուրաքանչյուր բնակչի շնորհավորում են այս մեծ գործի ծննդյան տարեդարձի կապակցությամբ,- ասաց նա:

Հանդիսությանը հնչեցին նաեւ Թբիլիսիի Պ.Աղայանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բալանդուրյանի, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Էմմա Ախտյանի, վերնատունցիներ Սուսաննա Ավետիսյանի, Լուսինե Վանոյանի, Արտեմ Գրիգորենցի ելույթները:

Տոնի գեղարվեստական մատուցում, որը վարեց ՎՅԳ «Վերնատուն»

տան» զանգվածային միջոցառումների ղեկավար Ռոզա Ջոհրաբյանը, գրական-գեղարվեստական կոմպոզիցիայով հանդես եկան տեղի դպրոցի սաներն (տնօրեն՝ Հրանուշ Խուբլարյան) ու «Կանանց», «Աջարական» վրացական

բռնաբաններն: Մասնավորապես հայտնի ռուսալեզու լրագրող Եկատերինա Մինասյանի ասումնքը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի (ղեկավար՝ Եվգենյա Մարկոսյան) մեծակատար Աիդա Բազդյանի, դուդուկահար Իվանե Սկրտչյանի եւ ազգագրական «Տարուն» պարի խմբի (պարուսույց՝ Սուրեն Աբրահամյան) գեղեցիկ կատարումները:

Հանդիսությանը ներկա էին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատան ղեկավարներ Աննա Սահակյանն ու Լեւոն Զարգարյանը, տոնին առաջին անգամ էին մասնակցում նաեւ Մամեուկի մունիցիպալիտետի Չամախչի գյուղի դպրոցականները՝ տնօրեն Մանանա Մանուկյանի հետ:

Օրը հագեցած էր Աղայանով, իսկ տպավորությունները բարձր



ժողովրդական պարերով՝ 7-րդ դասարանի աշակերտուհի Սուսաննա Բաբայանը:

Տպավորիչ էր աշխարհի ժողովուրդների պարերի մենակատար, բազմաթիվ մրցույթների դափնեկիր Սվետլանա Երիցյանի «Գիշեր ու ցերեկ» պարի հրաշալի կատարումը: Ներկաներն ըն-

դին ու լավատեսական...

Եվ վերջում, միջոցառման կազմում մասնավորապես աշակերտուհի Էմմա Բաբայանը երախտագիտություն հայտնվեց թբիլիսահայ ճանաչված բարերար Ալեքսանդր Ութմազյանին:

**ՎԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
«Վրաստանի» հատուկ թղթակից

## ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

### ԶՈՒՐԱԲ ԱԶԱՐԱՇՎԻԼԻ. «ԱՆԱՊԱՀՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆՊԱՍՏԸ ՀՈՒՆԻՍԻՅՑ ԿՂԱՌՆԱ 150, ԻՍԿ ՀԱԶՈՐԴ ՏԱՐՎԱՆԻՅՑ՝ 200 ԼԱՐԻ»

Մայիսի 11-ին, երկրի խորհրդարանում «Նախարարի ժամի» շրջանակներում, Վրաստանի փոխստակապետների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Զուրաբ Ազարաշվիլին հայտարարեց, որ 2022 թվականի հունիսից սոցիալապես անապահով երեխաների նպաստը 100 լարի-ից կդառնա 150 լարի, իսկ հաջորդ տարվանից՝ 200 լարի:



Հետեւաբար, մինչեւ 220 000 նպաստառուներ կստանան հավելյալ օգնություն:

Ինչպես նշեց նախարարը, կենցաղային նպաստի վարկանիշային միավորը բարձրացել է մինչեւ 120 հազար, հետեւաբար, ավելացել է նաեւ այդ օգնությունը ստացողների թիվը:

Զուրաբ Ազարաշվիլին, խորհրդարանում իր ելույթի ժամանակ, անդրադառնալով սոցիալապես անապահով խավի տնտեսական վիճակի թեմային, նշեց, որ համավարակի պատճառով վերագնահատում չի անցկացվել, հետեւաբար, ընտանիքները պահպանել են իրենց վարկանիշային միավորները եւ շարունակում են շարունակաբար տրամադրել սոցիալական աջակցություն:

## ՃԱՆԿԱՅԱԾ ՏԵՂԵԿԱՆԵՐ ԵՐԵՔ ՕՐՈՒՄ

Սպասարկման գործակալության կողմից տեղեկանքների տրամադրման ժամկետը կրճատվել է, հասնելով երեք օրվա:

Նախաձեռնողների պարզաբանման, արագացված սպասարկման դեպքում, տեղեկանքը հնարավոր կլինի ստանալ մեկ օրում: Տարածված տեղեկության համաձայն՝ սպասարկման գործակալության կողմից իրականացվող գործառնության գլխավոր խնդիրը տեղեկանքների համեմունքն է, որը իրականացվում է հինգ օրում, իսկ արագացված սպասարկման դեպքում՝ տեղեկանքը կհանձնվի երեք կամ մեկ օրում: Հիմնականում տեղեկանքները վերաբերում են դատվածությանը, իրավունքներից զրկմանը, ներքին գործերի նախարարության տվյալների բազայում առկա տեղեկատվությանը, պետական սահմանի հատմանը, անհայտ

կորած անձանց որոնման տեղեկատվությանը: Ինչ վերաբերում է սպասարկման սակագնին, ապա գործող օրենսդրությամբ, դատվածության, իրավունքներից զրկման վերաբերյալ տեղեկանքի ստացումը անվճար էր հինգ օրվա դեպքում, իսկ երեք օրում տվյալ տեղեկանքի ստացման սակագինը կազմում էր 15 լարի: Վերոնշյալ փոփոխությունների ներդրման դեպքում, այդ տեղեկանքները հինգ աշխատանքային օրվա փոխարեն, կտրվեն երեք օրում, եւ դրա սակագինը կկազմի 20 լարի: Մեկ աշխատանքային օրում վերոնշյալ տեղեկանքի ստացման համար, նախկինում սահմանված 25-ի դիմաց, սակագինը կկազմի 20 լարի:

## ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ



### Ի ՀԱՇՎ ԾՆԵԼՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՆՅՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՈՒ ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՃԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է 1,1 ՏՈՒԿՈՍՈՎ

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տեղեկատվությամբ, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Վրաստանում ապրում է 3 686 600 մարդ, ինչը, նախորդ տարվա համապատասխան նույն ժամանակահատվածի համեմատ, պակաս է 1,1 տոկոսով: Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ 2021 թվականին վավերացվել է բնակչության բնական աճի (-13960) եւ արտագաղթի (-25966) բացասական հաշվեկշիռը:

#### COVID-19-Ը ԵՎ ԿՅԱՆՔԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կորոնավիրուսի համավարակը, որը 2021 թվականին իլել է 12 հազար մարդու կյանք, բացասական ազդեցություն է ունեցել ժողովրդագրական իրավիճակի վատթարացման գործում:

Ընդգծենք, որ համավարակը նվազեցրել է նաեւ կյանքի տեւողությունը Վրաստանում: Եթե 2020 թվականին կանանց համար կյանքի միջին տարիքը 77,7 տարին էր, ապա 2021 թվականին այն կրճատվել է մինչեւ 75,4 տարի, իսկ տղամարդկանց համար՝ 69,1-ից մինչեւ 67,5 տարի:

2022 թվականի հունվարի 1-ի տվյալներով՝ Վրաստանի բնակչության միջին տարիքը կազմում է 38:

#### ԱՐՏԱԳԱՂԹԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՏԱՐԵՑՏԱՐԻ ԱՃՈՒՄ Է

Վիճակագրության ազգային ծառայության տվյալներով՝ 2021 թվականին Վրաստանից արտագաղթածների թիվը կազմել է 99974 մարդ, ինչը, նախորդ տարվա ցուցանիշի համեմատ, գերազանցում է 34,6 տոկոսով: Ինչ վերաբերում է ներգաղթին, ապա այդ ցուցանիշը, նախորդ տարվա համեմատ, նվազել է 17,8 տոկոսով եւ կազմել է 74,06 մարդ: Հատկանշական է, որ ներգաղթածների 82,5 եւ արտագաղթածների 88,6 տոկոսը աշխատունակ բնակչությունն է եւ պատկանում է 16-64 տարեկանների խմբին:

Եվս մի նշանակալի հանգամանք. ներգաղթածների 53,4, իսկ արտագաղթածների 80,4 տոկոսն են հանդիսանում Վրաստանի քաղաքացիներ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱԶԵ

#### ԾՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՑԱԾՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ ՎԵՐՋԻՆ 30 ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2021 թվականի ընթացքում Վրաստանում ժողովրդագրական իրավիճակը կտրուկ վատթարացել էր: Երկրում մահացածների պաշտոնական թիվը կազմել է 59 հազար 906:

2021 թվականին Վրաստանում ծնվել է 45 հազար 946 երեխա, որի արդյունքում բնական աճը կազմել է 13 հազար 960: Նշենք, որ սա ամենավատ արդյունքն է 1994 թվականից ի վեր:

Վրաստանից արտագաղթը նույնպես աճել է 2021 թվականին, ինչը նույնպես բացասական ազդեցություն է ունեցել բնակչության վրա՝ -25 հազար 966 քաղաքացի: Արդյունքում, Վրաստանի բնակչությունը նվազել է 39 հազար 926-ով կամ 1,1 տոկոսով:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ Վրաստանի բնակչության թիվը կազմել է 3 մլն 688 հազար 600 մարդ:

#### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ Է ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Վրաստանի վիճակագրական ազգային ծառայության տեղեկատվությամբ, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Վրաստանի բնակչության 59,7 տոկոսը կենտրոնացած է քաղաքային բնակավայրերում, ընդ որում, մայ-

րաքաղաքում՝ Թբիլիսիում, ապրում է երկրի բնակչության գրեթե մեկ երրորդը:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 0-14 տարեկանների թիվը բնակչության ընդհանուր հատվածում կազմում է 20,8 տոկոս, աշխատունակ բնակչության բաժինը (16-64 տարեկանների խումբը)՝ 63,7 տոկոս, իսկ 65 եւ ավելի տարեկանների թիվը կազմում է ընդհանուր բնակչության 15,5 տոկոսը:

#### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՅՔ ԵՆ

Վիճակագրության ազգային ծառայության տեղեկատվությամբ, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Վրաստանում տղամարդկանց թիվը կազմում է 1770,0 հազար, իսկ կանանց թիվը՝ 1917,7 հազար մարդ: Հետեւաբար, երկրի բնակչության 48 տոկոսը, ըստ տեղեկատվության, տղամարդ է, 52 տոկոսը՝ կին: Երկրի բնակչության սեռական համեմատությունը, կոնկրետ թվերով, ներկայացվում է 100 կնոջ դիմաց՝ 92 տղամարդ:

Հատկանշական է, որ, մինչեւ 30 տարեկանների խմբում, տղամարդկանց թիվը գերազանցում է կանանց թվին, թեւ, սկսած 30 տարեկանից բարձր, սեռերի հարաբերության պատկերը փոխվում է: Փորձագետների պարզաբանմամբ, դա պայմանավորված է նրանով, որ կանանց կյանքի տեւողությունն ավելի երկար է, քան տղամարդկանց: